ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆԱՀԱՊԵՏԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-Ն

10 մայիսի 2018 թվական գյուղ Նահապետավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆԱՀԱՊԵՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 35-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և ,Իրավական ակտերի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 3-րդ, 5-րդ մասերի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նահապետավան համայնքի ավագանին

որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նահապետավան համայնքի 2017 թվականի դեկտեմբերի 12-ի ,Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նահապետավան համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասինե թիվ 35-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններ

1. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 01, խումբ 1, դաս 1 (օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում) ծրագրի և ծախսերի տնտեսագիտական դասակարգման (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) 5113 հոդվածի 698 509 /վեց հարյուր իննսունութ հազար հինգ հարյուր ինն /դրամ թիվը և բառերը փոխարինել 398 509 /երեք հարյուր իննսունութ հազար հինգ հարյուր ինն /դրամ թվով և բառերով:
2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 01, խումբ 1, դաս 1 (օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում) ծրագրի և ծախսերի տնտեսագիտական դասակարգման /վարչական սարքավորումներ / 5122 հոդվածի 500 000 /հինգ հարյուր հազար /դրամ թիվը և բառերը փոխարինել 800 000 /ութ հարյուր հազար /դրամ թվով և բառերով:
3. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 06,խումբ 4,դաս 2 (փողոցների լուսավորում) ծրագրի ծախսերի տնտեսագիտական դասակարգման (շենքերի և կառույցների ընթացիք նորոգում և պահպանում) 4251 հոդվածի 960 000 / ինն հարյուր վաթսուն հազար / դրամ թիվը և բառերը փոխարինել 1 360 000 /մեկ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար/դրամ թվով և բառերով:
4. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 04, խումբ 5, դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) ծրագրի և ծախսերի տնտեսագիտական դասակարգման (շենքերի և կառույցների ընթացիք նորոգում և պահպանում) 4251 հոդվածի 0 /զրո/ դրամ թիվը և բառերը փոխարինել 960 000 /ինն հարյուր վաթսուն հազար/ դրամ թվերով և բառերով: